Ս. Հ. ԴԵՎԵՋՅԱՆ

ՏԱՇԻՐ-ԶՈՐԱԳԵՏԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հայկական բարձրավանդակը հնագույն ժամանակներից համարվել է մետաղագործական կենտրոն, որի ընդերքի հարստություններից օգտվել են Հին Արևելքի պետությունները, ինչպես նաև հունական գաղութներն անտիկ ժամանակներում։ Այստեղ բնակվող հնագույն մետաղագործ ցեղերի մասին հիշատակություններ կան Աստվածաշնչում[1], հույն պատմիչների երկերում (Հոմերոս, Ստրաբոն[2]), ասորեստանյան տարեգրություններում[3] և այլն։ Պղնձի հանքերով և մետաղե իրերի արտադրությամբ հնագույն ժամանակներից աչքի են ընկել Ճորոխի հովիտը, նրանից հարավ՝ Արղանա-Մադենը (Դիարբեքիրի շրջան), Սասունի լեռները, Զուլամերկի լեռները, Զանգեզուրը, Ղարաբաղը, Գանձակն ու Տաշիր-Զորագետը։

Վերջինս աչքի է ընկնում Ալավերդու և Շամլուղի հարուստ հանքավայրերով, ինչպես նաև քսանհինգ և ավելի մեծ ու փոքր հանքերակներով[4], որոնցից շատերը շահագործվել են դեռևս մետաղագործության արշալույսին։

Պետք է նշել, որ թեև Տաշիր-Զորագետի շրջանի մ. թ. ա. 3-րդ և 2-րդ հազարամյակների հուշարձանները համարյա չեն ուսումնասիրված, սակայն այստեղ հայտնաբերվել են վաղ բրոնզե ժամանակաշրջանի պղնձե կտցավոր կացին (Ալավերդի, 3-րդ հազարամյակի վերջ մ. թ. ա.), բրոնզե խողովակակոթաո կացին (Լորուտ), որոնք բնորոշ են 3-րդ հազարամյակի 2-րդ կեսի համար, բրոնզե սուսերներ (Ղաշաղան, Զորագէս), բնորոշ 2-րդ հազարամյակի 1-ին կեսի վերջի համար, պղնձե հնադարյան տեգի ծայր (Կիրովական, 3-րդ հազարամյակի կես)[5]։ Սրանք դիտվում են իբրև զարգացած բրոնզե ժամանակաշրջանի առանձին առարկաների նախատիպեր։ Այս առումով աչքի է ընկնում Կիրովականի ցեղային առաջնորդի միջին բրոնզեդարյան հարուստ դամբարանի կացինը, որին նման են Շամշադինի շրջանի Նավուր գյուղից հայտնաբերված սակրի երկու նախատիպերը։ Սրանք ունեն ձվաձև կոթառի անցք, մեկ կողմից ներճկված իրան, մյուս կողմից սապատավոր բարակ երիզ, իսկ աշխա-

---

1 *Աստվածաշունչ, Կոնստանդնուպոլիս, 1895, գլ. 27 (13)։*

2 *Հ ո մ ե ր ո ս, Իլիական, Վենետիկ, 1911, 2-րդ գլ., էջ 79, Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 83—85։*

3 Н. Б. Янковская, Некоторые вопросы экономики ассирийской державы, ВДИ, 1956, № 1.

4 *«Ազգագրական հանդես», 7-րդ և 8-րդ գրքեր, 1901, Թիֆլիս, էջ 291։*

5 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 30—32, 40, 70—71.

տտնքային մասը թեքված է դեպի ներքևկված կողմը։ Այս երկու օրինակները իրարից տարբերվում են աշխատանքային սայրի լայնությամբ։

Ինչ վերաբերվում է Կիրովականի XV դ. մ. թ. ա. հարուստ դամբարանարլրի սակրի նախատիպին, ապա այն ընդհուպ մոտենում է կովկասյան սակրին, պահպանելով մի կողմի սապատավոր մասը, սակայն փոքրացրած, ի հաշիվ աշխատանքային սայրի զգալի մեծացման ու կլորացման։ Կոթառի անցքը նույնպես ձվաձև է և գտնվում է մի կողքի վրա, այնպես, որ եթե այս կացնի ճիշտ կենտրոնից տանելու լինենք ուղղահայաց մի գիծ, նրա աջ կողմը համարելով ընդհանուր երկու կողմերի համար, ապա կստանանք լիարժեք սակր։

Զանդրադառնալով Տաշիր-Զորագետի վաղ շրջանի մետաղագործությանը և կանգ առնելով միայն սակրերի արտադրության վրա, տեսնենք, թե ինչ դեր է խաղացել Ալավերդու մետաղագործական օջախը զարգացած բրոնզե ժամանակաշրջանում։

Անդրկովկասում բրոնզե սակրերը հանդես են գալիս զարգացած բրոնզե ժամանակաշրջանում, որոնք իրենց նախնական ձևերն ունենալուց հետո ստանում են որոշակի կերպարանք, ապրում մի քանի դար շարունակ և վերջապես անհետանում, տնտեսության մեջ երկաթե կացինների մուտք գործելու հետ միաժամանակ։ Որոշակի ձև ունեցող բրոնզե կացինները, որոնք հնագիտական գրականության մեջ սակր են կոչվում, մեծ քանակությամբ հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասերի հնավայրերից։ Բաղմավաստակ գիտնական Ա. Ա. Իեսսենը 1934 թ. կազմել է սակրերի տարածման քարտեզը[6], որտեղից երևում է, որ դրանք տարածվում են հյուսիս-արևմուտքից՝ Սվանեթիա, հարավ-արևմուտքից՝ Մերս, հյուսիս-արևելքից՝ Լագոդեխի և հարավ-արևելքից՝ Արջաձոր հնավայրերի միջև ընկած տարածությունում։ Արևելքում սակրերի տարածման ամենածայրամասային կետը՝ Վարդաշենն է։ 1934 թ. տվյալներով Հայկական լեռնաշխարհում սակրերի թիվը 47 է, ձուլման կաղապարները 2-ն են (Գեորգիևսֆելդ՝ Շամքորի շրջան և Լենինական)։ Այժմ սակրերի և կաղապարների թիվը կրկնապատկված է, սակայն նրանց տարածման սահմանները մնում են անփոփոխ։ Սա մի հանգամանք է, որը խոսում է այն մասին, թե սակրերի մասսայական արտադրությունն ու օգտագործումը բնորոշ է եղել միայն աշխարհագրական այս շրջանի համար, որտեղ բնակվել են իրար հետ սերտ հարաբերությունների մեջ գտնվող և իրենց զարգացման մակարդակով միևնույն աստիճանի վրա կանգնած ցեղախմբեր։

Աշխարհագրական մի ամբողջություն կազմող և պղնձի հանքերով հարուստ Տաշիր-Զորագետի շրջանում, մինչև այժմ հայտնաբերվել է ընդամենը 21 սակր (Ախթալայից 8, Ալավերդուց 6, Կիրովականից 3, Ակներից 2, Ստեփանավանից 1, Լորուտից 1), որոնք, ըստ իրենց արտաքին նմանությունների կարելի է բաժանել առանձին խմբերի կամ տարբերակների։ Տարբերակների բաժանման գործում հիմք ենք ընդունել Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից Ախթալայի սակրերի դասակարգումը[8]։

---

[6] Л. А. Иессен, Из истории древней металлургии Кавказа, Изв. ГАИМК, вып. 120, 1935. էջ 152—153, քարտեզ 5։

[7] Л. А. Мартиросян, О древнем поселении около Ленинакана, ԳԱ Տեղեկագիր, 1952, № 10։

[8] Л. А. Мартиросян, Армения в эпоху...., էջ 116։

Պետք է նշել, որ նույնիսկ միևնույն տարբերակի մեջ մտնող սակրերից և ոչ մեկը մյուսին այնպես նման չէ, որ հնարավոր լինի ասել, թե նրանք միևնույն կաղապարի արտադրանք են։ Միշտ մեկը մյուսից տարբերվում է որևէ մանրամասով, որն ի դեպ, ապացույց է լայն արտադրության, որտեղ օգտագործվել են բազմազան ձևեր և օրինակներ։

Առաջին տարբերակն են կազմում այն սակրերը, որոնք կոթառի ծայրերին և կենտրոնում բարձրադիր երիզներ ունեն, վերևի մասը հարթ է, որոշ դեպքերում այդ մասերում թեթևակի փոսիկներ կան։ Դրանցից են. երկու սակր Ախթալայի գանձից (ՊՊԹ № 2089/3, աղ. 1, նկ. 1)[9] և Ալավերդուց մեկ սակր։

Երկրորդ տարբերակն են կազմում Ախթալայի գանձից հայտնաբերված երեք (ՊՊԹ № 2089/3, աղ. 1, նկ. 2) և Ալավերդուց մեկ սակր (ՊՊԹ 759/4), որոնց կոթառի բարձրադիր եզրերը շարունակվում են նաև նրա վերևի մասում, կենտրոնում ունեն բարձրադիր եռանկյունի, կոթառի վերևում՝ կոճակ։ Ախթալայի գանձի երկու սակրերը կոթառի հիմքում կրում են հորիզոնական ուղղությամբ արված փորագիր եղևնաձև զարդեր։

Երրորդ տարբերակին են պատկանում Անդրկովկասում այնքան տարածված սակրերը, որոնք կոթառի եզրերին ունեն խիստ ընդգծված բարձրադիր երիզներ, կենտրոնում նույնպես բարձր երիզ, վերևում կոճակով։ Դրանք են. չորս սակր Ախթալայից, որից երեքը գանձից (2-ի վրա գծային զարդեր կան), իսկ մեկը՝ պատահաբար, հայտնաբերվել է վերջերս[10]։ Երկու սակր Կիրովականի Դիմաց թաղամասից[11], երեքը Ալավերդուց (ՊՊԹ № 759/2, աղ. 1, նկ. 3), մեկը Ակների (Ոռնակ) № 16 դամբարանից (Թաքայաշվիլու պեղումներ)[12] և մեկը Ստեփանավանի դամբարանից։

Այս երեք տարբերակներն ընդհանուր են Հայաստանի մյուս շրջանների համար ևս, սակայն Հայաստանում հայտնաբերվել են նաև այլ տիպի սակրեր, որոնք կազմում են առանձին տարբերակներ, բայց դեռևս չեն հայտնաբերված Տաշիր-Զորագետի շրջանում։ Դրանք են՝

Առաջին տարբերակ. սակրեր, որոնք կոթառի վերևում թամբաձև բարձրություն ունեն։ Դրանցից է Նոյեմբերյան գյուղից վերջերս հայտնաբերված սակրը (աղ. 1, նկ. 4)[13]։

Երկրորդ տարբերակ. սակրեր, որոնց կոթառը քառակող է, պարզ, առանց բարձրադիր երիզների, կոթառի վերևում կոճակով։ Օրինակ՝ Արթիկի (ՊՊԹ № 2173/608, աղ. 1, նկ. 5) սակրը։

Երրորդ տարբերակ. սակրեր, որոնց կոթառը զուրկ է որևէ ավելորդ մանրամասնից, բոլորովին պարզ է։ Օրինակ՝ Լճաշենի սակրը (ՊՊԹ 2007/121, աղ. 1, նկ. 6)։

Այս տարբերակներից առաջին 4-ը ժամանակագրական տեսակետից կարելի է համարել միջին խմբի սակրեր (XII—XI դդ. մ. թ. ա.), իսկ վերջին երկուսը՝ վաղ խմբի (XIV—XIII դդ. մ. թ. ա.)[14]։

---

9 ՊՊԹ՝ Հայաստանի պետական պատմական թանգարան։

10 Այս սակրը հրատարակված չէ և պահվում է Թումանյան բանավանի միջնակարգ դպրոցին կից կազմակերպված թանգարանում։

11 Սրանք պահվում են Կիրովականի գավառագիտական թանգարանում։

12 Պահվում է Լենինգրադի էրմիտաժի ֆոնդերում։

13 Հրատարակվում է առաջին անգամ։

14 А. А. Мартиросян, նշված աշխ., էջ 102։



Աղյուսակ 1



Աղյուսակ 2

Վերոհիշյալ վեց տարբերակների մեջ մտնող բոլոր սակրերն իրենց կառուցվածքով մի ընդհանրություն են կազմում։ Սակայն Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված են նաև մի քանի այլ սակրեր, որոնք նման չեն միմյանց և ոչ էլ վերևի տարբերակներից որևէ մեկին։ Սրանք առայժմ առանձին օրինակներ են և իրենց համանմանները չունեն Հայաստանի նյութերում։ Դրանք են.

ա) Լճաշենի փոքրիկ սակրը (ՊՊԹ 2009/228, աղ. 2, նկ. 1), որն ունի կլոր աշխատանքային մաս, կոթառը նեղ է, վրան 6 սեպաձև ցցվածքներով։

բ) Իջևանի սակրը (աղ. 2, նկ. 2) փոքրիկ է, աշխատանքային մասը կարճ, կոթառի անցքը կլոր, որի վրա տարածվում է երկու կողմից թևիկներ, կոթառի գլխին բարձրադիր կոճակով։

գ) Փոքրիկ անհամաչափ սակրը՝ Արթիկից (ՊՊԹ 2173/21, աղ. 2, նկ. 3), կոթառի վերևում լայնությամբ անցնող բարձրադիր մասով, զուրկ է եզրերի երիզներից, աշխատանքային մասի ծայրերը խիստ իջած են և սայրը փոքրացած։

դ) Արթիկի դամբարաններից հայտնաբերված երկարավուն սակրը (ՊՊԹ N 2208/173, աղ. 2, նկ. 4) կոթառի վրա բարձր կոճակով, վիզը նեղ և աշխատանքային սայրի ծայրերը դարձված դեպի ետ, որը միանում է վզին։ Կոթառի անցքը ձվաձև է, երկու կողմերում ունի բրոնզյա մասեր, որոնց մեջ մտնում է փայտե կոթը։ Սրանց վրա կան եռանկյունաձև կարված զարդեր և կեռ խաչ։

ե) Արթիկից է նաև այն սակրը (ՊՊԹ 2208/82, աղ. 2, նկ. 5), որն ունի ձվաձև կոթառի անցք, վրան 3 բարձրադիր կոճակներով, մակերեսին եռանկյունաձև կտրվածքներ և ուղղահայաց զարդեր, որից ցած անմիջապես սկսվում է բոլորովին կլոր իրանը, վերին մասում երկու անցքերով։

զ) Ելենենդորֆի N 1 դամբանաբլրում հայտնաբերված երկկողմանի սակրը, կլոր աշխատանքային բերաններով, կոթառի անցքը՝ ձվաձև (աղ. 2, նկ. 6)։

Այս եղակի սակրերը[15], որոնց մեծ մասն իրենց համանմաններն ունեն, սակայն ոչ ճշգրիտ նմանությամբ, Միջագետքի երկրներում, Ասորիքում, Պաղեստինում, Եգիպտոսում, վկայում է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանները միջին և ուշ բրոնզե ժամանակաշրջաններում ոչ միայն կտրված չեն եղել Հին Արևելյան զարգացած երկրների մշակույթից, այլև փոխանակային կապերի միջոցով կարողացել են ճանաչել այդ երկրների նյութական մշակույթի և արվեստի առարկաները, ստեղծագործաբար վերարտադրելով դրանք տեղում։

Հայկական լեռնաշխարհում այնքան տարածված տարբեր տիպերի սակրերը, նախ և առաջ գործածվել են որպես զենք[16]։ Ուսումնասիրելով այն դամբարանները, որտեղից հայտնաբերված են սակրեր, կարելի է նկատել, որ նրանք մեծ մասամբ հանդես են գալիս այլ զենքերի և կամ աշխատանքային գործիքների հետ համատեղ։

Ռազմիկների դամբարաններում սակրերը մեծ մասամբ տեղավորված են լինում ննջեցյալի աջ ուսի մոտ, կարծես հարվածելու պատրաստ դիրքով։ Այդ-

---

15 А. Л. Мартиросян, նշվ. աշխ., էջ 71—73, Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N 2, աղ. 1, նկ. 16, Т. С. Хачатрян, Материальная культура Древнего Артика, Ереван, 1963, էջ 55—57, Я. И. Гуммель, Погребальный курган (№ 1) около Еленендорфа, изд. АзГПИИ, Баку, 1931, стр. 33, табл. V, эксп. 16.

16 С. А. Есаян, Оружие и военное дело Древней Армении, Ереван, 1966.

պիսին է օրինակ Ստեփանավանի մոտակայքի № 2 դամբարանը[17], որտեղ հայտնաբերված սակրն ունի բավական անաղարտ տեսք, պատկանում է երրորդ տարբերակի սակրերին, կոթառի հիմքում ունի գծային նուրբ զարդեր։ Ելնելով դամբարանում հայտնաբերված նաև 6 նետասլաքներից, դամբարանը կարելի է թվագրել մ. թ. ա. 2-րդ հազ. վերջով։ Նույնը կարելի է ասել Ռեսլերի կողմից 1893—1894 թթ. պեղված Արջաձորի № 1 հարուստ դամբարանների մասին, որտեղ թաղված է եղել տեղարնիկ ցեղի ռազմական առաջնորդը իր երեք թիկնապահ հեծյալների հետ։ Այստեղ հայտնաբերված բազմաթիվ հարուստ զենքերի ու ոսկե և այլ զարդերի հետ միաժամանակ հայտնաբերվել է նաև 1 սակր, առաջնորդի կողքին, որն անկասկած առաջնորդի ռազմական հանդերձի մի անփոխարինելի մասը պետք է կազմեր[18]։

Սակրի կարևոր զենք լինելու հանգամանքն իր մարմնավորումն է գտել պատերազմի և ամպրոպի աստված Թեշուբի բարձրաքանդակում (Խատուշայի դռների վրա)[19], որտեղ խեթերի գլխավոր աստվածը, ամբողջովին ռազմական հանդերձներով, սաղավարտով, դաշույնով, ձեռքին բռնել է ելուստավոր կոթառով ռազմական սակրը, որը կարծես ինքնին խորհրդանշանն է պատերազմի և հաղթության։

Թեշուբի ելուստավոր սակրին նման է Լճաշենի № 5 դամբարանների, սայլի առեղների տրանքում հայտնաբերված ելուստավոր փոքրիկ սակրը, բրոնզե երկար սրերի ուղեկցությամբ։ Նման ելուստավոր սակր (5 ելուստներով), 7 բրոնզե նիզակի և 3 նետասլաքների հետ միասին հայտնաբերված է Ռեսլերի կողմից Ելիզավետպոլի մոտ № 4 դամբարանից (Կիրովաբադի շրջան)[20]։ Մի այլ ելուստավոր կացին գտնված է Գանձակ գետի մոտ, Նարիմանովի կողմից. ինչպես նաև երկուսը Խանլարի ծայրամասերից[21]։ Վերջապես, 1936 թ. Կարմիր բլուրում հայտնաբերված սակրի կաղապարը (XIII—XII դդ. մ. թ. ա.), որը ոչ միայն վկայում է ելուստավոր սակրի մի այլ օրինակի գոյությունը, այլև այն, որ նրանք եղել են Հայկական լեռնաշխարհի արտադրանք։ Կարմիր բլուրի միջնաբերդից հայտնաբերված Թեյշեբա աստծու արձանիկի ձեռքին նույնպես կացին կա։

Հավանաբար պատերազմի աստվածության հետ կապված և սրբազան ու կարևոր զենք լինելու հանգամանքն է, որ հասցրել է սակրը որպես թալիսման-զարդ կրելու գաղափարին, ըստ երևույթին, դա պետք է իր կրողին փորձանքից հեռու պահեր և ֆիզիկական առավելություններ պարգևեր թշնամու նկատմամբ։ Բրոնզից և շաղախից պատրաստված այդպիսի սակրաձև զարդեր և շքասեղներ են հայտնաբերվել Լճաշենից, Ղարաբաղից, Աղաբեթիից, Մինգեչաուրից, Ծալկայից և այլ հնավայրերից[22]։ Հայկական լեռնաշխարհում այնքան

17 Մ. А. Сагателов, Археологические находки в урочище Джелал-Оглы. Изв. КОМ арх. общ., вып. I, Тифлис, 1904, էջ 50—55։

18 К. Х. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVII, 1957, էջ 137—140, 153—154, նկ. 2-ի 13-ը։

19 Н. А. Флиттнер, Культура и искусство Двуречья, էջ 226։

20 ИАК, вып. 12, էջ 52, նկ. 14։

21 К. Х. Кушнарева, նշված աշխ., էջ 158։

22 Ե. Լալայան, Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում, էջ 192, նկ. 188, ИАК, вып. 12, էջ 58, նկ. 19, Б. А. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949, табл. XVI, նույնի, Археологические раскопки в Триалети, Тбил., 1941, էջ 77, նկ. 87, 1, Асланов, Вандов, Ионе. Древний Мингечаур. 1959, табл. XIX, նկ. 1, 5, 6, 12, 29։

տարածված նրբագեղ զարդերով ու պատկերներով պատած բրոնզե գոտիները, որոնց նյութերը նախնադարյան պաշտամունքային տեսարաններ են, իրենց մյուս զարդերի կողքին ունեն սակրաձև մարմիններ, որ նույնպես նրա պաշտամունքային լինելու հանգամանքն է ցույց տալիս։ Հավանական է, որ Հայաստանի տարբեր շրջաններից հայտնաբերված, վերևում հիշատակված եզակի, շքեղ սակրերը հանդիսացել են ցեղային ռազմիկ առաջնորդի ուժի և իշխանության խորհրդանշանը։ Բացի կոթառի ձևերից, խիստ կարևոր են և մեծ հետաքրքրություն են ներկայացնում սակրերի աշխատանքային մասերը, որոնց ուսումնասիրության միջոցով միայն հնարավոր կլիներ գաղափար կազմել նրանց գործածության, դերի և նշանակության մասին։

Ակնհայտ է, որ սակրերն ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում ոչ միայն որպես զենք են օգտագործվել, այլև իբրև կացին — գործիք և խիստ անհրաժեշտ են եղել փայտամշակման գործում։ Այն սակրերը, որոնք օգտագործվել են որպես գործիք, դամբարաններում մեծ մասամբ ուղեկցվում են այլ գործիքների հետ (դուր, տափակ կացին և այլն) և հաճախ իրենց վրա կրում են աշխատանքի հետքերը (Իջևան, Լճաշեն, Թաքիա), ըստ որում, երբեմն կոթառի ու սայրի կողմից միաժամանակ (Վարդաքար)[23]։

Ուշադիր դիտելով սակրերի աշխատանքային բերանները, անկախ նրանց կոթառի կառուցվածքից ու մեծությունից, կարելի է նկատել, որ նրանք բաժանվում են հիմնականում երեք խմբի.

Առաջին խմբի մեջ են մտնում այն սակրերը, որոնց աշխատանքային բերանները լայն են, կիսաշրջանաձև, տարածված են երկու կողմերի վրա, եզրերը ցածր են և կազմում են սուր անկյուններ։ Սրանց աշխատանքային սայրերը մեծ ընդգրկում ունեն, ինչպես, օրինակ, Ախթալայի գանձից մի քանի սակրեր (ՊՊԹ № 2089/3, աղ. 1, նկ. 7)։

Երկրորդ խմբին են պատկանում այն սակրերը, որոնց աշխատանքային իրանները նեղ են, երկարավուն, երկու ծայրերը սեղմված թևերի պես բարձրանում են վերև, հասնելով կոթառի անցքին։ Սրանց աշխատանքային սայրը նեղ է և փոքր ընդգրկում ունի։ Օրինակ՝ Ալավերդու սակրը (ՊՊԹ 759/4, աղ. 1, նկ. 8)։

Երրորդ խմբի աշխատանքային իրանները կարծես առաջին և երկրորդ խմբերի համադրումն են, ունեն առաջինի լայն աշխատանքային սայրերն ու երկրորդի կլորացող ու դեպի վերև բարձրացող ծայրերը։ Այս խմբի սակրերի աշխատանքային սայրերը նույնպես մեծ ընդգրկում ունեն, աննշան չափերով զիջելով առաջինին, օրինակ՝ Ախթալայի գանձի մի սակրը (ՊՊԹ № 2089/3, աղ. 1, նկ. 9)։ Այս տիպի սակրերն ավելի բազմաթիվ են Հայաստանի հնագիտական նյութերում։

Սակրերի աշխատանքային մասերի այս բաժանումը երեք խմբի, ընդհանուր է նաև Հայաստանի բազմազան հնավայրերից հայտնաբերված բոլոր սակրերի համար, եթե հաշվի չառնենք այն եզակի օրինակները, որոնց մասին խոսվեց վերևում։ Թվում է, որ աշխատանքային սայրի տարբեր ձևերը ինքնա-

---

23 А. А. Мартиросян, Т. С. Хачатрян, Комплекс изделий из могильника Такиа, ԳԱ «Տեղեկագիր», 1959, № 11, Т. С. Хачатрян, Комплекс бронзовых предметов из с. Вардакар, ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 3.

նպատակ չեն, այլ ընդհակառակը, հարմարեցված են ծառայեցնելու որոշակի աշխատանքային նպատակի։ Կարելի է ենթադրել, որ լայն բերանով կացինները, որոնք կարող են ընդգրկել համեմատաբար լայն աշխատանքային տեղամաս, օգտագործվել են ծառ կտրելու և մանավանդ գերաններ տաշելու և տախտակ դարձնելու համար (1-ին և 3-րդ խմբեր)։ Ավելի նեղ բերանով սակրերը (2-րդ խումբ) հավանաբար օգտագործվել են փայտ ճեղքելու համար, քանի որ նրանց նեղ բերանները ավելի հարմար են հարվածը ուժեղացնելու և կենտրոնացնելու համար մեկ կետի վրա։ Վերևում հիշատակված Վարդաքարի սակրը հավանաբար փայտ կոտրելու է ծառայել, քանի որ կոթառի կոճականման ելուստը տափակած է, կոթառի կողմով ևս հարվածելու հետևանքով։

Ինչպես տեսանք, Հայկական լեռնաշխարհում այնքան տարածված բազմաթիվ և բազմապիսի սակրերը, առանձին օրինակներով ներթափանցել են հյուսիս, հասնելով մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթան (Սվանեթիա, Լագոդեխի) և ավելի հարավ՝ Ցխինվալի (Հարավային Օսեթիա), որտեղից հայտնաբերված է նաև սակրի ձուլման քարե կաղապար[24]։ Կաղապարներ հայտնաբերվել են նաև Շամքորում, Երևանում և Լենինականում, որոնք (բացի Շամքորինից) գտնվում են մետաղամշակության կենտրոններից հեռու վայրերում։ Ի միջի այլոց, մետաղաձուլական առաջին կաղապարները ևս Հայաստանում հայտնաբերվել են հանքավայրերից հեռու (Շենգավիթ, Գառնի)[25]։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ մետաղաձուլությունը կատարվել է ոչ միայն հումքին մոտիկ օջախներում, այլև մետաղի հումքը արտահանվել է տարբեր վայրեր և ապա ձուլվել։

Կովկասյան սակրերը, որոնք երևան են գալիս գանձերում և դամբարաններում, իրենց տարածման շրջանակով բռնում են ամբողջ Անդրկովկասի կենտրոնական լեռնային շրջանները, իսկ արևելյան ու արևմտյան դաշտավայրերը զուրկ են դրանցից։ Բուն հայկական բարձրավանդակում նրանք ունեն ավելի խոշոր չափեր, արևելքում ուղեկցում են ավելի փոքրիկ ձևերին, իսկ արևմտյան սահմանագծում՝ արևելյան Վրաստանում նկատվում է կոլխիդյան ու կոբանյան տիպերի հետ համատեղություն, երբեմն նույնիսկ այս երկուսի համաձուլումներ[26]։ Կացինների այս երկու շատ տարածված ձևերի փոխազդեցության հետևանքով, ուշ բրոնզեդարում առաջացած հիբրիդային ձևերը կարելի է տեսնել Ռաչա—Բորժոմ—Ախալցխա գծի վրա, որը կարծես բնական սահման է ստեղծում շրջանցելով Կոլխիդայի դաշտավայրը և բարձրանալով Կուրի հոսանքով։ Սրանք կոբանյան տիպերից անցում են կատարում դեպի անդրկովկասյան սակրը, կոթառի և աշխատանքային մասի սիմետրիկ ձևերով, մանավանդ Զոբիսխեվիի (Ախալցխա) սակրը, որը մի կողմից հիշեցնում է Արթիկի եղակի սակրը (ՊՊԹ № 2173/21), մյուս կողմից՝ Զանգեզուրում հայտնաբեր-

---

24 Ф. Тавадзе и Т. Сакварелидзе, Бронзы Древней Грузии, Тбилиси, 1959, табл. XXXI.

25 А. А. Мартиросян, К предыстории древнейших этапов культуры Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, Է. Վ. Խանզադյան, Մետաղաձուլության առաջին փաստերը Հայկական լեռնաշխարհում հնագույն բրոնզի դարաշրջանում։ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 297։

26 Т. Н. Чубинишвили, Т. И. Татишвили, О. С. Гамбашидзе, Археологические разведки в южных районах Грузии (Месхети-Джавахети) в 1953—1955 гг., СА, 1957, № 4, рис. 6, Б. А. Куфтин, Арх. маршрут. эксп...., табл. XXIX.

ված բրոնզե կացինը (ՊՊԹ 132)։ Սա նույնպես խառնուրդ ձև է, ինչպես նաև Դաղստանի սակրը (էրմիտաժ № 17742), որի կոթառը, սակայն ոչնչով չի տարբերվում երկրորդ տարբերակի սակրերի կոթառից, որի հիմքը բարակ գծային զարդեր ունի, իսկ աշխատանքային բերանը խիստ նեղ է։

Մի շարք ուսումնասիրողներ գտնում են, որ Մեսխեթի—Ջավախեթին ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում պետք է գտնվեր կոլխիդյան մշակույթի ոլորտում և այստեղից է, որ այդ մշակույթը ներթափանցել է արևելք՝ Հյուսիսային Հայաստանի վրայով[27]։ Նույնը պետք է ասել հակառակ ուղղությամբ, այն, որ դեռ վաղ բրոնզե ժամանակաշրջանից Հայաստանի հյուսիսը և արդի Վրաստանի հարավը (Թուզարքի հյուսիսային գավառները), որն ի դեպ, իր աշխարհագրական դիրքով մեկ միասնական շրջան է կազմում, դեպի հյուսիս, Հին Արևելքի մշակույթի փոխանցման օղակ է հանդիսացել[28]։ Առավել ևս, ուշ բրոնզեդարում, երբ Ալավերդու մետաղաձուլական օջախն իր զարգացման փայլուն շրջանում էր, անկասկած պետք է իր ազդեցությունն ունենար հարևան շրջանների վրա, նրանց մատակարարելով հումք և պատրաստի արտադրանք։ Արևելա-վրացական սակրերը, որոնք հանդես են գալիս մեծ մասամբ գանձերում, ըստ հնագետ, պատմ. գիտ. դոկտոր Հ. Ա. Մարտիրոսյանի հավաստիացման, թվագրվում են VIII—VII դդ. մ. թ. ա., երբ այլևս բրոնզե սակրերը դուրս էին եկել գործածությունից և գանձերում պահվում էին ձուլման նպատակով։

Դամբարաններից հայտնաբերված սակրերը ժամանակագրական տեսակետից կապվում են Տաշիր-Զորագետի նյութերին, հանդես բերելով արտաքին մանրամասների աննշան տարբերություններ։

Համեմատելով արևելավրացական սակրերը Տաշիր-Զորագետի մետաղագործական օջախի սակրերի հետ, կարելի է նկատել, որ այստեղ առկա են 1-ին և 3-րդ տարբերակները։ Առաջին տարբերակի մեջ է մտնում Սամտավրոյի № 240 դամբարանի սակրը (XIII—XII դդ. մ. թ. ա.), որն իր կոթառի կառուցվածքով կրկնում է Ախթալայի գանձից և Ալավերդուց (XII դ. մ. թ. ա.) հայտնաբերված նույն տարբերակի մեջ մտնող սակրերին, իսկ աշխատանքային բերանի կառուցվածքով մոտենում է 1-ին խմբի սակրերին, որից նույնպես հայտնաբերվել է Ախթալայի գանձում։ 1-ին տարբերակին է պատկանում նաև Սամտավրոյի № 591 դամբարանի սակրը (XII—IX դդ. մ. թ. ա.)[30], որի աշխատանքային բերանը երրորդ խմբի սակրերին է նման, և սա առկա է նաև Ախթալայի գանձում։ Այս սակրը, կոթառի վրա կրում է ուռուցիկ, ուղիղ և կոր, վերևից ներքև իջնող գծային զարդեր, որի նմանը առայժմ հայտնաբերված չէ որևէ հնավայրում։

Ախալքալաքի գանձին պատկանող երկու սակրերը, իրենց կոթառի ձևով մի փոքր մոտենում են 1-ին տարբերակին, այնքանով, որ զուրկ են կոթառի վերին կոճակից, սակայն չեն կարող մտնել այս տարբերակներից որևէ մեկի մեջ։ Այս սակրերի կոթառները զուրկ են մեջտեղի ուռուցիկ երիզից, դրա փո-

---

27 Т. Н. Чубинишвили, Т. И. Татишвили, О. С. Гамбашидзе, նշվ. աշխ., էջ 118։

28 А. А. Мартиросян, Армения в эпоху..., էջ 31—32։

29 Г. А. Ломтатидзе, Археологические раскопки в Мцхета, Тбилиси, 1955, табл. VI.

30 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, табл. V.

խարեն, նրանցից մեկը, որի եզրերի երիզները շարունակվում են նաև վերևում, իր վրա կրում է ուղղահայաց ուղղությամբ փորագրված, մանրիկ եղևնաձև զարդ։ Այս սակրերի աշխատանքային բերանները նեղ են, եզրերը վերջանում են սուր անկյուններով, նման են 2-րդ խմբին։ Բ. Ա. Կուֆտինը ենթադրում է, որ այս սակրերը ժամանակին կարող են գնված լինել Երևանի նահանգից[31]։ Երրորդ տարբերակից են Ցխինվալիի (Հարավային Օսեթիա) գանձից հայտնաբերված սակրը[32] և քարե կաղապարը, որից ձուլված սակրը պետք է որ նման լինի այս սակրերին և Աղաբեթիի փոքրիկ հմայիլ-սակրը[33], որն իր ձևով կարծես կրկնում է ակներևությունը։ Երրորդ տարբերակի սակրերը, որոնք Տաշիր-Ձորագետյան կացինների հիմքն են կազմում, հավանաբար իրենց ազդեցությունն են տարածել դեպի հյուսիս, հասնելով մինչև Հարավային Օսեթիա։

Այլ տիպ է Կվեմո-Սասիրեթիի գանձից հայտնաբերված սակրը (XIII—X դդ. մ. թ. ա.)[34], որն իր ժամանակով, ձևով և գանձի մեջ պարունակող այլ առարկաներով (եղնիկի և թռչնի արձանիկ, դուր, տափակ կացին և այլն), մոտենում է Լճաշեն-արթիկյան ձևերին, համարվելով 5-րդ տարբերակի սակրերից։ Մեխչիս-Օիխեի (Կարսի շրջան) գանձից հայտնաբերված սակրը (X—IX դդ. մ. թ. ա.)[35], որի կոթառը զուրկ է եզրերի ուռուցիկ երիզներից, միայն կենտրոնում ունի բարձր կոճակ ու երիզ, գնում է դեպի պարզեցում, աշխատանքային բերանի ձևով կապվելով 1-ին խմբի սակրերին։ Իր ձևով շատ ավելի պարզ է Ռաչայի սակրը, որի կոթառը զուրկ է կոճակից, միայն 2 կողմերում թեթև երիզներ ունի, շատ նման է Վարդաշենի փոքրիկ, պարզ սակրին։

Ինչպես տեսնում ենք, Արևելյան Վրաստանում հայտնաբերված սակրերը, որոնց մեծ մասը կապ ուներ Ալավերդու մետաղաձուլական օջախի նյութերի հետ, հասել է մինչև Հարավային Օսեթիա։ Այս ազդեցությունը դեպի հյուսիս կարող էր տեղի ունենալ երկու ուղղությամբ. Ալավերդի, Ախալքալաք, Ախալցխա, Բորժոմ, Գորի։ Մյուս կողմից՝ Ալավերդի, Մցխեթ, այս ձևով շրջանցելով Թրիալեթի (Թռեղք) լեռնաշղթան, մի թևով հասել է հյուսիս-արևելք՝ Լագոդեխի, մյուսով հյուսիս-արևմուտք՝ Ցխինվալի, Ռաջա, Սվանեթիա։ Մյուս գիծը՝ դեպի հարավ կարող էր տանել Շիրակի դաշտով դեպի Կարս (Մերս), Կարին և այլն։ Արևելա-վրացական մեզ հայտնի 28 սակրերը, բացի Սամտավրոյի երկու դամբարաններից, հանդես են գալիս բացառապես գանձերում, ուղեկցվելով կոլխիդյան և կոբանյան կացիններին։ Կարելի է ենթադրել, որ այս գավառների կենցաղում բնորոշ չեն եղել սակրերը, նրանք բերվել են արևելքից և կամ նույնությամբ ձուլվել տեղում։ Սակրերի տարածման արևելյան կողմերում մենք այս երևույթը չենք նկատում, նրանք հավանաբար մտած են եղել այստեղի ցեղախմբերի կենցաղի մեջ և ձուլվել Գանձակի ու Լեռնային Ղարաբաղի մետաղագործական օջախներում։ Ա. Ա. Իեսսենը հավանական է գտնում, որ

---

31 Б. А. Куфтин, նշված աշխ. էջ 20, табл. XV.

32 Նույն տեղում, табл. XIV, նկ. 3։

33 Նույն տեղում, табл. XVI.

34 Cl. Schaeffer, Stratigraphie comparée et chronologie de l'Asie Occidentale (III et II mil.), London, 1948, fig. 299.

35 St. Przeworski. Die Metallindustrie Anatoliens in der Zeit von 1500—700. Leiden, 1939, табл. III, 5.

Արևելյան Վրաստանում սակրերը կարող են ներմուծված լինել, որոնք ծառայել են որպես գործիք, իսկ «կոբանյան» թեթև կացինները՝ որպես զենք[36]։

Կոլխիդյան կացինների և Անդրկովկասյան սակրերի համատեղ հանդես գալը գանձերում կամ դամբարաններում, բոլորովին չի նկատվում կենտրոնական Անդրկովկասում։ Արդի Հայաստանում հայտնաբերված են երեք կոլխիդո-կոբանյան կացիններ (Փարաքար, Լենինական, Գոլովինո), որը վկայում է զարգացած բրոնզե դարում տեղի ունեցած փոխանակային կապերի, ինչպես նաև այն մասին, որ Հայաստանը առևտրական կապերի հանգուցակետ էր հանդիսանում շատ վաղ ժամանակներից, շնորհիվ իր աշխարհագրական միջանկյալ դիրքի Արևելքի և Արևմուտքի միջև։ Կոլխիդո-կոբանյան կացինները բնորոշ չեն եղել կենտրոնական Անդրկովկասի համար, կենցաղի մեջ լայն տարածում չեն գտել, նրանք Սև ծովի արևելյան ափերից հասել են մինչև Ուրմիա լիճ, հայկական բարձրավանդակով անցնող մի քանի ուղղություններով[37]։

Համեմատելով Տաշիր-Զորագետի սակրերը Գանձակի (Ուտիք) և Լեռնային Ղարաբաղի մեզ ծանոթ սակրերի հետ, կարելի է նկատել, որ ալավերդյան առաջին և երկրորդ տարբերակներն այստեղ բացակայում են, երրորդ տարբերակի սակրեր են հայտնաբերվել Մինգեչաուրի քանդված դամբարանից, Շամքորի շրջանից, Լեռնային Ղարաբաղից (Կիրկիջանի գանձ)[38]։ Կիրկիջանի գանձի ուշ բրոնզեդարյան 6 սակրերից պահպանվել են միայն 4-ը, որոնցից մեկի կոթառի կոճակը խիստ մաշված է, կենտրոնական բարձրադիր երիզ չունի և վզի մասում՝ փոքրիկ ցցուն շրջանակ։ Մյուս երեքը, թեև հարում են երրորդ տարբերակի սակրերին, սակայն սրանց կոթառի եզրերի երիզները այնքան ուռուցիկ չեն, ինչպես այն տեսնում ենք Տաշիր-Զորագետյան սակրերի մոտ, երկուսը վզի հիմքում ունեն փոքրիկ ցցուն շրջան, մեկի վրա բարակ գծիկներ են արված։ Մյուս սակրերը, հայտնաբերված Մինգեչաուրի քանդված դամբարանից, Արջաձորի և Ելենենդորֆի № 1 դամբարանաբլրից և Ռեսլերի կողմից Արջաձորում, իրենց ձևերով կապվում են ավելի Սևանի ավազանի և Արթիկյան տիպի կացինների հետ, հանդես բերելով Գանձակ-Ղարաբաղյան և Միսխանայի օջախների փոխազդեցության և տեղական արտադրանքի ինքնուրույն ձևեր։

Ըստ հնարավորին ծանոթանալով մինչև այժմ հայտնաբերված «անդրկովկասյան» սակրերին, կարելի է ասել, որ Հայկական լեռնաշխարհում և նրանից հյուսիս, սակրերի թիվը այժմ հասնում է առնվազն 106-ի (եթե նկատի ունենանք նաև Անդրկովկասում հայտնաբերված և Լենինգրադի էրմիտաժում պահվող № 17141 սակրը), իսկ կաղապարներինը՝ 4-ի, որոնք հայտնաբերվել են բազմաթիվ հնավայրերից[39]։ Միայն Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված սակրերի թիվը հասնում է 101-ի և 3 կաղապարի, արդի Հայաստանի սակրերը 54-ն են 2 կաղապարով։ Մինչև այժմ հայտնաբերված սակրերի քանակը Ալավերդու մետաղագործական օջախում ավելի մեծ է, քան Հայաստանի և հարևան երկրների մյուս ֆիզիկա-աշխարհագրական շրջաններում։ Այսպես,

---

36 А. А. Иессен, նշված աշխ., էջ 159—160։

37 А. А. Мартиросян, նշված աշխ., էջ 124—127։

38 Асланов, Ваидов, Ионе, նշված աշխ., табл. XII, նկ. 3, И. М. Джафарзаде, Элементы археологической культуры древней Мугани, Изв. АН Аз. ССР, вып. IV, 1946, № 9, Я. И. Гуммель, Раскопки в Нагорно-Карабахской автономной области в 1938 г., Изв. Аз. филиала АН СССР, 1939, № 4, табл. II.

39 Տե՛ս կից սխեման։

օրինակ, Տաշիր-Զորագետում՝ 21 սակր, Շիրակում՝ 10 և 1 կաղապար, Աղբստև-Դեբեդի շրջանում՝ 10, Սևանի շրջանում՝ 9, Արարատյան գոգահովտում՝ 2 սակր և 1 կաղապար, Զանգեզուրում՝ 2, Գանձակում՝ 16 սակր և 1 կաղապար, Լեռնային Ղարաբաղում՝ 8, Հայաստանից հյուսիս ընկած շրջանում, մինչև Կուրի աջ ափը (Ախալքալաք, Ախալցխա, Կվեմո-Սասիրեթի, մինչև Գորի)՝ 19 սակր, որից միայն 14-ը Ախալքալաքի գանձից է, Մցխեթում՝ 2, Հարավային Օսեթիայում և ավելի հյուսիս՝ 5 և 1 կաղապար, Կարսի շրջանում՝ 2։

Ինչպես տեսնում ենք, սակրերի թվով բոլորից հարուստը Տաշիր-Զորագետն է։ Իհարկե, հայտնաբերված հնագիտական նյութերի քանակը կախված է նաև տվյալ շրջանի լավ կամ վատ ուսումնասիրված լինելուց, սակայն պետք է նկատի ունենանք, որ Տաշիր-Զորագետի շրջանում կանոնավոր պեղումներ չեն կատարվել, նյութերը մեծ մասամբ պատահական են և խնամքով հավաքված ու հիմնավորված չեն։ Որոշ մասերում պեղումներ են կատարվել անցյալ դարի վերջերին, որոնք մեծ մասամբ ավելի ուշ՝ երկաթե դարի շրջանի են։ Ինչպես տեսնում ենք, այն շրջանները, որոնք ավելի մոտ են գտնվում Տաշիր-Զորագետին և նրա անմիջական ազդեցությանն են ենթարկվել, սակրերի քանակով անհամեմատ ավելի հարուստ են, քան ավելի հեռավոր շրջանները։ Աղստև-Դեբեդի և Սևանի շրջանները, որոնք արևելքից հարևան են Շամքոր-Ղարաբաղյան մետաղագործական կենտրոններին, իսկ արևմուտքից ու հյուսիսից՝ Ալավերդուն, ըստ երևույթին կրել են երկու կենտրոնների ազդեցությունը ևս և հարստացրել են իրենց տնտեսությունը մետաղագործական արտադրությամբ։ Շիրակը հիմնականում ազդվել է Ալավերդուց և մետաղագործության հիանալի նմուշներ է տվել։

Հետաքրքրական է այն պարագան, որ մետաղագործության այս հարուստ շրջանում չեն հանդիպում այնպիսի եզակի սակրեր, ինչպիսիք մենք տեսնում ենք Արթիկի, Լճաշենի, Իջևանի, Խանլարի դամբարաններում։ Ըստ երևույթին սա բացատրվում է նրանով, որ Տաշիր-Զորագետի շրջանը արտադրության կենտրոն լինելով, բավարարվում էր իր իսկ արտադրությամբ, չէր ներմուծում, այլ արտադրում էր ավելի մասսայական ձևով, փոխանակության համար, որի հետևանքով էլ այդպիսի ուրույն ձևեր Ալավերդու մետաղագործական օջախում բացակայում են։

Այսպիսով, բրոնզե սակրերն ուշ բրոնզեդարում խիստ տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում, հանդիսացել են տեղական արտադրանք, բնորոշ աշխարհագրական այս միջավայրին։

Սակրերի արտադրության ամենախոշոր կենտրոններից է եղել Ալավերդու մետաղագործական օջախը, որն իր ազդեցությունն է ունեցել հարևան շրջանների վրա, պատրաստի սակրերի և հումքի արտահանման տեսակետից։ Սակրերն օգտագործվել են որպես զենք և որպես շատ կարևոր գործիք փայտամշակության տարբեր աշխատանքներ կատարելու համար։



Սակրերի տարածման սխեման